Հայերն իրանց թոով բազմութիւն էին կազմում եւ, համարեա, բաղկացնում էին ամբողջ ազգաբնակչութեան կէսից աւելի մասը:

Որպէսզի գիտենալ, թէ ինչ դրութեան մէջ էին այն ժամանակ հայերը, պէտք է նախ ծանօթանալ տիրող ազգի՝ քրդերի բնաւորութեան եւ նրանց քաղաքական կազմակերպութեան հետ:

Քրդերը բաժանուած էին զանազան ցեղերի, որոնց գլուխներն էին՝ Մուքուրի, Թակուրի, Միլանցի, Յայտարանլի, Շաւի, Ջալալի, Ռաւանդ, Բիլբաստ, Մամըքանի, Հարթոշի, Շիկակ, Հարքի, Եզիդի: Դրանք շատ քիչ էին զանազանւում յատկութիւններով եւ սովորութիւնով. խօսում էին մեդական լեզոով, որ իւրաքանչիւր ցեղի մէջ որոշւում էր բարբառների առանձնայատկութեամբ: Կրօնով մահմեդական էին՝ սուննի աղանդից: Եզիդիները միայն բաժանուած էին կրօնով, որոնք պաշտում էին չար եւ բարի ոգիները, երկրպագութիւն էին տալիս տնային օջախին: Դրանք գուցէ մնացորդներ էին Արամազդի եւ Արիմնի հին երկրպագուներից, որոնց մէջ մինչեւ այսօր երեւում են մոգական ծէսեր:

Քրդերը չունէին գիր եւ գրականութիւն. շէյխերը (դէնպետները) միայն գիտէին արաբերէն կարդալ, որով աւանդում էին ժողովրդին իրանց կրօնի հրահանգները, որոնք բովանդակւում էին մի քանի պարզ եւ թեթեւ, արտաքին ծիսակատարութիւնների մէջ: Միակ բանը, որ գիտէր ամէն քուրդ իր հաւատքի հանգանակից, էր նամազը, որը նա մեքենաբար եւ ճիշտ կերպով կատարում էր նշանակեալ ժամերում, առանց հասկանալու, թէ ինչ էին նշանակում իր այնքան ջերմեռանդութեամբ արտասանած արաբական բառերը: Բացի դրանից, քուրդը գիտէր մեծ մարգարէի-մուհամմեդի անունը, եւ նրա նախկին խալիֆաների՝ Օմարի, Օսմանի, Աբու-Բաքիրի անունները եւ աւելի ոչինչ:

Բայց ժողովրդական անգիր բանաստեղծութիւնը կենդանի էր քրդերի մէջ. նա ծագելով ամբոխի իսկական կեանքից, ունէր նոյն բնաւորութիւնը եւ ոգին, որով ապրում էր ինքը ամբոխը: Հովերգութիւնը եւ քաջազնական յանգերգութիւնը գլխաւոր տեղն էին բռնում նրանց բանաստեղծութեան մէջ, առաջինը, որպէս մի խաշնարած ցեղի կեանքի առշնչութիւն, երկրորդը, որպէս նրա պատերազմական ոգու արտայայտութիւն: Հովական երգերը տխուր էին եւ մելամաղձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակւում էին հովիւի սրինգի խուլ եւ ձգական հնչիւնների հետ: Իսկ պատերազմական երգերը կրակոտ, վառվռուն եւ խրոխտ էին, նրանք լիահնչիւն համարձակութեամբ որոտում էին թմբուկների ձայնի հետ: